նրա ձիերի, կովերի, գոմէշների երամակները: Այդ բոլորը պիտի մնար որպէս ժառանգութիւն նրա եօթն որդիներին, որոնցից ամենակրտսերն էր Կարօն:

Միր-Մարտոյի օրըստօրէ զօրանալը, նրա յաջողութիւնները մշտական կռիւների մէջ, գրգռեց մի հարեւան քուրդ ցեղապետի նախանձը: Նա չկարողանալով բացարձակ կերպով վնասել նրան, սկսեց դիմել խորամանկութեան. բարեկամութիւն հաստատեց Միրի հետ, ձեւացրեց իրան նրա ամենամտերիմ դաշնակից: Եւ մի անգամ, խաբէութեամբ Միրին իր մօտ հիւր կանչելով, ընթրիքի ժամանակ հրամայեց նրան ցած գլորել իր բերդի բարձրութիւնից:

Կարօյի հայրը այսպէս նենգութեամբ սպանուելն յետոյ, նրա ամբողջ ընտանիքը զոհ եղաւ քուրդ բռնակալի բարբարոսութեանը, բոլորը սրից անցան. ողջ մնաց միայն փոքրիկ Կարօն, որին իր դայակը– Զումրուդը – փախցնելով, թաքցրեց մի ասորու տան մէջ:

Հիւանդը վերջացրեց իր պատմութիւնը այս խօսքերով.

— Այն սարսափելի կոտորածի միջոցին, քո մայրը, Կարօ, կուրծքից խենջարով խոցուած, մի ձեռքով բռնել էր վէրքը, միւս ձեռքով քեզ յանձնեց ինձ, ասելով. «ա՛ռ, Զումրուդ, եթէ աստուած կյաջողէ ազատել երեխայիս, սովորեցու՛ր նրան վրէժխնդիր լինել»... Այդ խօսքերի հետ նազելի տիկինս աւանդեց հոգին:

Բոլոր պատմութեան ժամանակ Կարօն հանգիստ էր. նրա դէմքի վրայ ես նկատում էի մի տեսակ զարմացում, մի տեսակ ապշութիւն, որ առաջ էին գալիս անագան ինքնաճանաչութեան զգացմունքից: Անտէր, անտուն, թափառաշրջիկ պատանին յանկարծ զգում էր իր երակների մէջ իշխանական արեան հոսումը: Բայց երբ նա լսեց պառաւի վերջին խօսքերը, նրա դէմքի արտայայտութիւնը իսկոյն փոխուեցաւ. շրթունքը սկսեց դողդողալ, աչքերի մէջ փայլեց կատաղի բարկութիւն: Կարծես այն լուռ, զայրացած դէմքի վրայ ես կարդում լինէի– «երդւում եմ իմ մօր սուրբ յիշատակով, որ ես անպատճառ վրէժխնդիր կլինեմ»...

— Ես չկարողացայ աւելի վաղ յայտնել քեզ, Կարօ, մօրդ կտակը, — շարունակեց պառաւը, — որովհետեւ դու շատ փոքր էիր: Սպասում էի, մինչեւ մեծանաս, մինչեւ աւելի հասունանաս: Ես ոչինչ չկարողացայ սովորեցնել քեզ: Բայց քո հօր պատմութիւնը բաւական է վրէժխնդրութեան դաս լինելու համար: Ես մեռնում եմ հանգիստ սրտով, որովհետեւ գիտեմ, ինձանից յետոյ մի աւելի հմուտ, աւելի փորձուած ձեռք քեզ պիտի առնէ իր պաշտպանութեան ներքոյ: Լսի՛ր նրա խրատները եւ ոգեւորութեամբ ընդունիր ինչ որ